30.10.2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ, ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳ

(նոր խմբագրությամբ)

1. Սույն Կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (այսուհետ՝ ԱՃԹՆ) բազմաշահառու խմբի (այսուհետ՝ ԲՇԽ) քաղաքացիական հասարակության խմբակցության (այսուհետ՝ ՔՀԽ) ձևավորման, անդամների և այլընտրանքային անդամների թեկնածուների առաջադրման, ընտրության և լիազորությունների դադարեցման հետ կապված գործընթացները և հարաբերությունները:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2. ՔՀԽ-ն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներից բաղկացած խումբ է, որի նպատակն է ներկայացնել քաղաքացիական հասարակության տեսակետները և շահերը ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ում՝ կառավարության և հանքարդյունաբերության ներկայացուցիչների հետ բազմաշահառու եռակողմ ձևաչափում հավասարակշռելու հանքարդյունաբերության քաղաքականությանն ու ԱՃԹՆ-ին առնչվող որոշումների ընդունումը և ապահովելու պատասխանատու հանքարդյունաբերությունը Հայաստանում:
3. ՔՀԽ անդամները և այլընտրանքային անդամներն (համատեղ նշելիս այսուհետ՝ նաև ՔՀԽ ներկայացուցիչներ) իրենց գործունեությունն իրականացնում են միջազգային <u>ԱՃԹՆ ստանդարտի</u>, <u>ԱՃԹՆ-Հայաստանի ԲՇԽ աշխատակարգի</u> (այսուհետ նաև՝ ԲՇԽ աշխատակարգ), <u>Քաղաքացիական հասարակության խմբակցության միջազգային ուղեցույցի</u> և սույն Կարգի հիման վրա:
4. ՔՀԽ ներկայացուցիչների գործունեության սկզբունքներն են՝ անկախությունը, օրինականությունը, հրապարակայնությունը, անդամների իրավահավասարությունը, ինքնակառավարումը, կոլեգիալությունը և հաշվետվողականությունը:
5. ՔՀԽ ներկայացուցիչները պետք է ունենան կարողություններ՝ իրականացնելու իրենց պարտականությունները:
6. ՔՀԽ ներկայացուցիչները հաշվետու են իրենց ընտրողների, ինչպես նաև հասարակության առջև և պատասխանատու են լիարժեք, արժանահավատ, պատեհաժամ տեղեկություն տրամադրելու համար՝ պարբերաբար կազմակերպվող հանրային հանդիպումների, քննարկումների, գրավոր և բանավոր հաշվետվությունների միջոցով:

7. ՔՀԽ ներկայացուցիչներն ԱՃԹՆ-ի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

II. ՔՀԽ ԿԱԶՄԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. ՔՀԽ-ն բաղկացած է քաղաքացիական հասարակության առավելագույնը հինգ հիմնական անդամից (այսուհետ՝ նաև անդամ) և առավելագույնը՝ նույն քանակով այլընտրանքային անդամից:
9. ՔՀԽ հինգ անդամներից մեկն ընտրվում է որպես գիտական համայնքի ներկայացուցիչ, մեկը՝ մարզային քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ, մյուս երեքը ներկայացնում են քաղաքացիական հասարակության առավել լայն շրջանակ: Ընտրությունների ժամանակ գիտական համայնքի ներկայացուցչի և/կամ մարզային ներկայացուցչի թեկնածուներ չլինելու դեպքում սահմանված քվոտայի պահանջն անտեսվում է և ՔՀԽ անդամների կազմը համալրվում է ի հաշիվ քաղաքացիական հասարակության առավել լայն շրջանակի կազմակերպությունների ներկայացուցիչների: Հնարավորինս հաշվի են առնվում աշխարհագրական ու գենդերային ներկայացվածությունը, ոլորտային և այլ առումներով բազմազանությունը:
10. ՔՀԽ այլընտրանքային անդամներն ընտրվում են ՔՀԽ անդամների 9-կետում նշված համամասնությամբ և կարգով:
11. Հերթական ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում հիմնական անդամների թիվը նվազելու դեպքում նրանց տեղը համալրվում է այլընտրանքային անդամներով, իսկ այլընտրանքային անդամների թիվը նվազելու դեպքում համալրումը կատարվում է վերջին ընտրություններին առավել ձայն ստացած թեկնածուներով: Թեկնածուների բացակայության դեպքում թափուր տեղերը համալրվում են ՔՀԽ գործող հիմնական և այլընտրանքային անդամների համատեղ ձայների 2/3-ով հրավիրված անձանցով:
12. ՔՀԽ անդամը ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ աշխատակարգով սահմանված կարգով մասնակցում է ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատանքներին և իրականացնում է իր լիազորություններից բխող գործառույթներ:
13. ՔՀԽ այլընտրանքային անդամը ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ աշխատակարգով սահմանված կարգով մասնակցում է ԲՇԽ-ի նիստերին առանց ձայնի (քվեարկելու) իրավունքի, իսկ խմբակցության անդամի բացակայության դեպքում փոխարինում է տվյալ անդամին ձայնի (քվեարկելու) իրավունքով:
14. ՔՀԽ ներկայացուցիչն ընդգրկվում է ԲՇԽ-ում մինչև հաջորդ ընտրություններ, որոնք տեղի են ունենում երեք տարին մեկ անգամ: ԲՇԽ գործունության սկիզբ է համարվում ՀՀ կառավարության որոշմամբ ԲՇԽ անդամների կազմի հաստատման վերաբերյալ որոշման օրը:

III. ԸՆՏՐԵԼՈՒ ԵՎ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Լայն շրջանակի հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների ներկայացուցիչներ

15. ՔՀԽ անդամների և այլընտրանքային անդամների ընտրությունների գործընթացում որպես ընտրող ներգրավվելու և թեկնածու առաջադրելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետությունում գրանցված և գործող այն հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները (համատեղ՝ կազմակերպություններ), որոնք աջակցում են ԱԵԹՆ սկզբունքներին և պահանջներին՝ միտված արդյունահանող ոլորտների թափանցիկության ու հաշվետվողականության ապահովմանը՝ նվազեցնելու կոռուպցիան և վերափոխելու տնտեսությունը՝ աղքատությունը նվազեցնելու, բնական ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու, շրջակա միջավայրը պահպանելու, մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովելու, բարեկեցության ստանդարտները բարձրացնելու և սոցիալական արդարությունը երաշխավորելու նպատակով:
16. Ընտրություններին ընտրելու իրավունքով կարող են մասնակցել այն կազմակերպությունները, որոնք ընտրությունների նշանակման օրվան նախորդող առնվազն վերջին մեկ տարվա ընթացքում արտահայտել են հրապարակային դիրքորոշումներ հանքարդյունաբերության քաղաքականության և/կամ ԱԵԹՆ-ին առնչվող այլ թեմաների վերաբերյալ: Ընտրող կազմակերպությունները ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված ձևաչափով հրապարակում են վերջին մեկ տարվա իրենց գործունեության (իրականացված ծրագրերի) մասին տվյալներ, այդ թվում՝ ֆինանսավորման աղբյուրներն ու ստացված գումարները, ինչպես նաև ԲՇԽ մյուս խմբակցությունների հետ ունեցած հնարավոր շահերը:
17. Ընտրություններին ՔՀԽ թեկնածու կարող են առաջադրել Հայաստանի Հանրապետությունում գրանցված և գործող այն կազմակերպությունները, որոնք ընտրությունների նշանակման օրվան նախորդող առնվազն երեք տարվա ընթացքում արտահայտել են հրապարակային դիրքորոշումներ հանքարդյունաբերության քաղաքականության և/կամ ԱԵԹՆ-ին առնչվող այլ թեմաների վերաբերյալ: Թեկնածու առաջադրող կազմակերպությունները ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված ձևաչափով հրապարակում են վերջին երեք տարվա իրենց գործունեության (իրականացված ծրագրերի) մասին տվյալներ, այդ թվում՝ ֆինանսավորման աղբյուրներն ու ստացված գումարները, ինչպես նաև ԲՇԽ մյուս խմբակցությունների հետ ունեցած հնարավոր շահերը: Նրանք նաև ներկայացնում են տեղեկություններ՝ հավաստելու իրենց գործունության թափանցիկությունը (օրինակ՝ տարեկան հաշվետվություններ, ինտերնետային կայքեր կամ սոցիալական մեդիայում ներկայացվածություն, միջոցառումներ, հետազոտություններ և այլն):

Մարզային ներկայացուցիչներ

18. Մարզային քաղաքացիական հասարակության կազմակերպություն է համարվում Հայաստանի Հանրապետությունում գրանցված և որևէ մարզում գործունեություն իրականացնող կազմակերպությունը:
19. ՔՀԽ մարզային ներկայացուցիչների ընտրելու և ընտրվելու իրավունքն ապահովվում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների լայն շրջանակի համար սահմանված՝ Կարգի 15-17-րդ կետերով նախատեսված կարգով:

Գիտական համայնքի ներկայացուցիչներ

20. ՔՀԽ գիտական համայնքի անդամների և այլընտրանքային անդամների ընտրությունների գործընթացում առաջադրվելու կամ ինքնառաջադրվելու միջոցով ընտրվելու իրավունք ունեն գիտական աստիճան ունեցող կամ գիտակրթական գործունեություն ծավալող այն անձինք, որոնք ընտրությունների նշանակման օրվան նախորդող առնվազն երեք տարվա ընթացքում հրապարակայնորեն արտահայտել են գիտականորեն հիմնավորված դիրքորոշումներ (հոդվածների, հարցազրույցների, գիտաժողովներում ելույթների և այլ եղանակով) հանքարդյունաբերության քաղաքականության և/կամ ԱՃԹՆ-ի ստանդարտներին առնչվող այլ թեմաների վերաբերյալ:

Թեկնածուներին առաջադրվող պահանջներ

21. ՔՀԽ անդամի կամ այլընտրանքային անդամին առաջադրվող պահանջները ներառում են հետևյալը.
    - փորձառություն այնպիսի թեմաներում, ինչպիսիք են, թափանցիկությունը, արդյունահանող արդյունաբերությունը, էներգետիկան, լավ կառավարումը, <u>ԱՃԹՆ ստանդարտը</u> և գործընթացը, ինչպես նաև վերաբերելի այլ հարցերում,
    - կարողություն՝ կիրառելու երկարաժամկետ ռազմավարական մտածողություն և հավասարակշռելու կազմակերպական, պետական շահերը՝ պահպանելու ԱՃԹՆ-ի ամուր ստանդարտը,
    - բավարար հեղինակություն, կապեր, համագործակցություն և կարողություն՝ համոզված խոսելու քաղաքացիական հասարակության անունից ՔՀԽ և ԲՇԽ նիստերում,
    - շահագրգիռ կողմերի լայն շրջանակի (մասնավոր հատված, դոնորներ, միջազգային ֆինանսական հաստատություններ, կառավարություններ, լրատվամիջոցներ և այլն) հետ աշխատելու լավ փորձ ու հետաքրքրություն և դրանց հետ կապված երկխոսության և բանակցային հմտություններ,
    - հանքարդյունաբերական տարածքների/համայնքների քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և տեղական համայնքների հետ աշխատելու փորձ,
    - բավարար ժամանակ և պատրաստակամություն՝ լայնորեն խորհրդակցելու այլ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ներկայացուցիչների հետ՝ ժամանակին, արձագանքող և բաց տեսակետներն ու կարծիքները քննարկելու, քաղաքացիական հասարակության ավելի լայն լսարանին ՔՀԽ և ԲՇԽ որոշումների և նիստերի արդյունքների վերաբերյալ պարբերաբար զեկուցելու համար,
    - քաղաքացիական հասարակությանը և հասարակական կյանքում ներգրավվածության ապացուցելի փորձ՝ <u>ԱՃԹՆ վարքագծի կանոններին</u> համապատասխան.
    - ԲՇԽ մյուս խմբակցություններում և դրանցում ներկայացված կազմակերպություններում վերջին 3 տարվա մեջ ներգրավվածության կամ դրանց հետ փոխկապակցվածության (այդ թվում՝ ընտանիքի անդամի միջոցով) բացակայություն:

22. ՔՀԽ անդամի կամ այլընտրանքային անդամի թեկնածուն իրենց դիմումում կամ կից ներկայացնում են ապացույցներ՝ հավաստելու իրենց համապատասխանությունը Կարգի 21-րդ կետի պահանջներին և այդպիսով՝ համապատասխանությունը ԱՃԹՆ սկզբունքներին ու նպատակներին:.
    1) առնվազն երեք տարվա փորձ ԱՃԹՆ ստանդարտներին վերաբերելի որևէ ոլորտում,
    2) առնվազն երեք տարվա ներգրավում քաղաքացիական հասարակության գործող կազմակերպություններում,
    3) քաղաքացիական դիրքորոշումների արտահայտման պատմություն և հրապարակային հողումներ,
    4) ընտանեկան, ֆինանսական կամ այլ կապերի բացակայություն ԲՇԽ մյուս խմբակցություններում ներառված պետական կազմակերպությունների և/կամ արդյունահանող ընկերությունների կամ դրանց միավորումների ղեկավար կազմերի ու ԲՇԽ-ում ներկայացված անձանց հետ:
23. ՔՀԽ անդամի կամ այլընտրանքային անդամի թեկնածուները հրապարակում են ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված ձևաչափով և ժամանակահատվածում ԲՇԽ մյուս խմբակցությունների հետ ունեցած իրենց և իրենց ընտանիքի անդամների (կին, ամուսին, մայր, հայր, քույր, եղբայր, երեխա) շահերի հայտարարագիր, ինչպես նաև նույն ժամանակահատվածի համար եկամուտների հայտարարագիր՝ ներկայացնելով իրենց եկամուտի աղբյուրները և հանքարդյունաբերական ընկերություններից և դրանց կողմից ստեղծված կամ մասնակցությամբ հիմնադրամներից կամ ՀՀ պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված գումարները: Հայտարարագրման ենթակա տվյալների համար սահմանվող ժամկետը չի կարող գերազանցել երեք տարին:
24. Շահերի հայտարարագրման նպատակն է կանխել ՔՀԽ հիմնական և այլընտրանքային անդամների շահերի բախումը, այսինքն՝ այնպիսի իրավիճակները կամ հանգամանքները, որտեղ նրանց գործողությունը կամ որոշումը կարող է հայտնվել մասնավոր և այլ շահերի ազդեցության ներքո՝ խոչընդոտելով նրանց կողմից իրենց պարտականությունների պատշաճ կատարումը: Շահերի բախման իրավիճակներում շահերի հայտարարագրման պահանջը տարածվում է ԲՇԽ ՔՀԽ անդամների վրա ԲՇԽ-ում նրանց գործունեության ողջ ընթացքում:

IV. ՔՀԽ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

25. ՔՀԽ-ն կազմավորվում է ՔՀԽ ներկայացուցիչների թեկնածուների ընտրության միջոցով՝ փակ գաղտնի քվեարկությամբ:
26. ՔՀԽ ներկայացուցիչների ընտրություններին քվեարկությանը յուրաքանչյուր քաղաքացիական հասարակության կազմակերպության անունից ընտրություններին կարող է մասնակցել միայն մեկ ներկայացուցիչ՝ կազմակերպության ղեկավարը կամ նրա կողմից գրավոր լիազորված անձը:
27. ՔՀԽ ներկայացուցչի թեկնածուն ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված կարգով ներկայացնում է հայտարարագիր՝ հրապարակելով իր և իր ընտանիքի անդամների եկամուտի աղբյուրները և հանքարդյունաբերական ընկերությունների ու

ԱՃԹՆ շրջանակում ներառված պետական կառավարման մարմինների հետ առնչվող շահերը, իսկ հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների ներկայացուցիչների թեկնածուները՝ նաև իրենց համապատասխան կազմակերպությունների ֆինանսավորման աղբյուրները և գումարները, հանքարդյունաբերական ընկերությունների ու ԱՃԹՆ շրջանակում ներառված պետական կառավարման մարմինների հետ առնչվող շահերը:

28. Հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների պարագայում միևնույն կազմակերպությունից չի կարող առաջադրվել ՔՀԽ ներկայացուցչի մեկից ավել թեկնածու, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ կազմակերպություններից ներկայացուցիչների թեկնածուներ առկա չեն: Այս պարագայում՝ միևնույն կազմակերպությունից կարող է առաջադրվել անդամի միայն մեկ և այլընտրանքային անդամի միայն մեկ թեկնածություն:
29. Հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների թեկնածուն ներկայացնում է միայն իրեն առաջադրող կազմակերպությունը, ինչը սակայն չի բացառում նրա անդամակցությունն այլ կազմակերպություններին և/կամ համագործակցությունն այլ կազմակերպությունների և/կամ նրանց ներկայացուցիչների հետ:

V. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒՄԸ

30. ՔՀԽ ներկայացուցիչների հերթական ընտրությունները նախաձեռնվում են ՔՀԽ գործող անդամների կողմից՝ Կարգի համաձայն՝ ԱՃԹՆ ԲՇԽ ձևավորման նախորդող շրջափուլի ավարտից ոչ ուշ քան երեք ամիս առաջ:
31. Ընտրությունները կազմակերպվում և անցկացվում են հերթական ընտրություններից առաջ ձևավորված ընտրական հանձնաժողովի կողմից:

VI. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

32. Ընտրական հանձնաժողովը ձևավորվում է ՔՀԽ գործող անդամների կողմից կազմակերպվող՝ Կարգի 15-րդ և 16-րդ կետերով սահմանված չափանիշներին առերևույթ համապատասխանող կազմակերպությունների համաժողովի կողմից՝ ՔՀԽ ընտրությունների գործընթացի նախաձեռնության մասին հրապարակման օրվանը հաջորդող մեկ ամսում:
33. Ընտրական հանձնաժողովի կազմում ընտրողների կողմից առաջադրվում և ձայների պարզ մեծամասնությամբ ընտրվում են անձինք, որոնց գործունեությունը պարտադիր չէ, որ առնչվի հանքարդյունաբերության ոլորտին:
34. Ընտրական հանձնաժողովը բաղկացած է առնվազն երեք և առավելագույնը՝ յոթ անդամից և ընտրվում է ընտրողների պարզ մեծամասնությամբ:
35. Ընտրական հանձնաժողովի կազմում չեն կարող ընդգրկվել ՔՀԽ անդամի կամ այլընտրանքային անդամի ընտրության համար հավակնող կազմակերպությունների ղեկավար մարմինների ներկայացուցիչներ կամ աշխատակիցներ:
36. Ընտրական հանձնաժողովը

1) կազմում և հրապարակում է ընտրությունների անցկացման ժամանակացույցը՝ իր ձևավորման պահից հինգ օրվա ընթացքում,
2) որոշում է ընտրությունների անցկացման օրը և ձևաչափը, տարածում է հայտարարություն՝ ապահովելով, որ այն հասանելի դառնա ԱՃԹՆ ստանդարտներին առնչվող ոլորտներում գործունեություն ծավալող հնարավորինս լայն աշխարհագրական ծածույթով և մեծ թվով անկախ ու ԱՃԹՆ այլ խմբակցությունների հետ չփոխկապակցված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների,
3) սահմանում է ընտրողների, թեկնածու առաջադրող ՔՀԿ-ների և թեկնածուների կողմից ներկայացվող փաստաթղթերի ձևանմուշները՝ իր ձևավորման պահից տասն օրվա ընթացքում,
4) հաստատում է ընտրությանը մասնակցելու հայտ ներկայացնող ընտրողների համապատասխանությունը Կարգի 15-րդ և 16-րդ կետերով սահմանված չափանիշներին, իսկ թեկնածու ներկայացնողների համապատասխանությունը Կարգի 15-րդ, 17-րդ և 19-րդ կետերով սահմանված չափանիշներին և թեկնածուների համապատասխանությունը Կարգի 21-րդ և 22-րդ կետով սահմանված չափանիշներին՝ իրազեկելով այդ մասին համապատասխան կազմակերպություններին և թեկնածուներին,
5) ընտրությանը մասնակցելու հայտ ներկայացնող ընտրողների և թեկնածուների կողմից համապատասխան հայտը ոչ ճիշտ կամ թերի լրացնելու պարագայում՝ տեղեկացնում է ընտրողներին և թեկնածուներին դիմումը ստանալուց հետո ոչ ուշ քան երեք օրվա ընթացքում,
6) տալիս է եզրակացություն ՔՀԽ ներկայացուցչի թեկնածուի՝ բազմաշահառու խմբի մյուս խմբակցությունների հետ շահերի բախման մեջ գտնվելու կամ այդպիսի փաստացի ռիսկերի վերաբերյալ՝ դիմումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում,
7) կազմակերպում և անցկացնում է նախընտրական առնվազն մեկ հանդիպում թեկնածուների և ընտրողների միջև,
8) կազմակերպում և անցկացնում է ընտրությունները Կարգով սահմանված ընթացակարգով,
9) ամփոփում է ընտրությունների արդյունքները, կազմում է արձանագրություն, հրապարակում է այն և ներկայացնում ՀՀ ԱՃԹՆ քարտուղարություն,
10) քննում է ընտրական գործընթացի հետ կապված՝ ոչ իր դեմ ներկայացված բողոքները:

37. ՔՀԽ ընտրություններին մասնակցելու մտադրություն ունեցող ընտրողներն ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների ժամանակացույցի հրապարակումից հետո ոչ ուշ քան տասն օրվա ընթացքում, լրացնելով համապատասխան ձևանմուշը, գրանցվում են ընտրական հանձնաժողովի առցանց հարթակում որպես ընտրող: Ընտրողների հայտերի հաստատումն ընտրական հանձնաժողովի կողմից իրականացվում է հինգ օրվա ընթացքում:

38. ՔՀԽ ընտրություններին ընտրվելու նպատակով քաղաքացիական հասարակության կազմակերպություններն առաջադրում են թեկնածուներ, իսկ գիտական համայնքի ներկայացուցիչներն առաջադրվում կամ ինքնառաջադրվում են՝ ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների ժամանակացույցի հրապարակումից հետո ոչ ուշ քան քսան օրվա ընթացքում՝ լրացնելով համապատասխան ձևանմուշը և գրանցվելով ընտրական հանձնաժողովի առցանց հարթակում որպես թեկնածուներ: Թեկնածուների հայտերի հաստատումն ընտրական հանձնաժողովի կողմից իրականացվում է հինգ օրվա ընթացքում:
39. Կարգի 36-րդ կետի 5-րդ մասի համաձայն՝ ընտրողների և թեկնածուների կողմից ոչ ճիշտ և թերի լրացված հայտերը լրամշակվում և կրկին ներկայացվում են ընտրական հանձնաժողովին դրանց ոչ ճիշտ և թերի լինելու մասին ծանուցում ստանալուց հետո երկու օրվա ընթացքում:
40. ՔՀԽ ընտրելու և ընտրվելու իրավունք ունեցող անձանց գրանցումներն ընտրական հանձնաժողովի կողմից կարող են մերժվել Կարգով սահմանված պահանջներին չբավարարելու, ոչ լիարժեք տվյալներ տրամադրելու և այլ խմբակցությունների հետ վերջին մեկ տարվա մեջ շահերի փաստացի բախման առկայության պարագայում:
41. Ընտրության արդյունքներն ամփոփվում են քվեարկության օրվանից հետո առավելագույնը հինգ օրվա ընթացքում և ներկայացվում ԱՃԹՆ-Հայաստանի քարտուղարությանն ընտրական հանձնաժողովի կողմից արձանագրությունը ստորագրելուց հետո առավելագույնը հինգ օրվա ընթացքում:
42. Ընտրական հանձնաժողովի եզրակացություններն ու արձանագրությունները ստորագրվում են բոլոր անդամների կողմից՝ հատուկ կարծիքի ներկայացման հնարավորությամբ:
43. ԲՇԽ ՔՀԽ գործող ներկայացուցիչները կարող են ընտրական հանձնաժողովին տրամադրել տեխնիկական օժանդակություն՝ ըստ վերջինիս դիմումի:
44. Կարգով սահմանված ընթացակարգով անցկացված քվեարկության արդյունքում առավելագույն ձայներ ստացած թեկնածուները հաստատվում են որպես ՔՀԽ անդամներ կամ այլընտրանքային անդամներ՝ ըստ Կարգի 9-րդ կետով սահմանված քվոտաների և թեկնածուների արտահայտած նախապատվությունների:
45. Ընտրական հանձնաժողովի որոշումների վերաբերյալ բողոքները կարող են քննվել ընտրելու իրավունք ունեցող անձանց նախաձեռնությամբ ձևավորվող անկախ արբիտրների հանձնաժողովի կողմից, որը պետք է կայացնի իր որոշումը երեք ամսվա ընթացքում: Մինչև արբիտրների որոշման հրապարակումը շարունակում է գործել առկա ՔՀԽ կազմը:
46. Ընտրական հանձնաժողովի նիստերը բաց են ընտրողների, ԲՇԽ գործող անդամների և այլընտրանքային անդամների և ԱՃԹՆ-Հայաստանի քարտուղարության առջև: ՔՀԽ քվեարկության և արդյունքների ամփոփման գործընթացը կարող է դիտարկվել նաև այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից, տեսանկարահանվել և հեռարձակվել:

VII. ՔՀԽ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

47. ՔՀԽ ներկայացուցչի անդամությունը և լիազորությունները դադարեցվում են՝
    1) ՔՀԽ ներկայացուցչի՝ ՔՀԽ մյուս ներկայացուցիչներին ուղղված դիմումի հիման վրա,
    2) լիազորությունների ժամկետն ավարտվելու դեպքում՝ 14-րդ կետին համապատասխան,
    3) ՔՀԽ կողմից սահմանված՝ ԲՇԽ անդամին առաջադրվող պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ նոր փաստերի առկայության (ի հայտ գալու) դեպքում՝ ՔՀԽ անդամների ընդհանուր թվի 4/5-ի որոշմամբ,
    4) ՔՀԽ կողմից տվյալ ներկայացուցչի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ որոշման ընդունման դեպքում՝ ՔՀԽ անդամների ընդհանուր թվի 4/5-ի որոշմամբ, ինչի համար հիմք կարող են հանդիսանալ անհարգելի բացակայությունները, ՔՀԽ աշխատանքների, այդ թվում՝ ընդհանուր նպատակին միտված գործունեության խոչընդոտումը,
    5) ԲՇԽ այլ խմբակցությունների հետ շահերի բախման առկայության դեպքում, որի վերաբերյալ որոշումն ընդունվում է ընտրական հանձնաժողովի կողմից, իսկ դրա բացակայության դեպքում՝ անկախ արբիտրների կողմից:
48. ՔՀԽ ներկայացուցչի լիազորությունները դադարեցնելու և ՔՀԽ գործող ներկայացուցիչների՝ Կարգի 11-րդ կետով նախատեսված ներքին տեղափոխության պարագայում ՔՀԽ նոր ներկայացուցչի թեկնածությունը ՔՀԽ գործող անդամների համատեղ որոշմամբ ներկայացվում է ԱԾԹՆ-Հայաստանի քարտուղարությանը՝ թափուր տեղի մասին տեղեկության ստացումից հետո ոչ ուշ քան մեկ ամսվա ընթացքում:

VIII. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

49. Կարգն ուժի մեջ է մտնում ԱԾԹՆ-Հայաստան կայքում հրապարակվելուց հետո: Կարգի առնչությամբ ԱԾԹՆ հայաստանյան և/կամ միջազգային քարտուղարության կողմից ստացված դիտողությունները և մեկնաբանությունները քննարկելու նպատակով, ըստ անհրաժեշտության, հրավիրվում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համաժողով, ինչը սակայն չի խոչընդոտում Կարգի ընդունման օրը ձևավորված ընտրական հանձնաժողովի գործունեությունը և/կամ կասկածի տակ չի դնում դրա ձևավորման կարգը, եթե այդ կապակցությամբ ուղղակի չի ստացվել ԱԾԹՆ հայաստանյան և/կամ միջազգային քարտուղարության կողմից վերաբերելի դիտողություններ:
50. Կարգով չկարգավորված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են ՔՀԽ անդամների գործող կազմի կողմից՝ ձայների ընդհանուր թվի 4/5-ով՝ ընձեռելով հնարավորություն հատուկ կարծիքի համար: